Ամսաթիվ
2011-07-01

Գործի No
ՎԴ/3666/05/10

Դատարան
Վարչական դատարան

Հայցվոր
Սիփան-1 ՍՊԸ

Պատասխանող
ՀՀ էրերգետիկայի և բնական պաշարների նախարարություն

Խնդիր
Հրամանն անվավեր ճանաչ պ/մ

Դատական ակտ
Վարչական գործ
թիվ ՎԴ/3666/05/10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

01 հուլիսի 2011թ.
ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝
նախագահությամբ՝ դատավոր Կ. Բաղդասարյանի,
քարտուղարությամբ՝ Կ. Մարկոսյանի,

մասնակցությամբ՝ հայցվոր »Սիփան-1« ՍՊԸ
/պետական գրանցման համար 13.110.00274, ՀՎՀ04001189/
ներկայացուցիչ Կարեն Թունյանի,
/վկայական թիվ 842/

պատասխանող Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և
բնական պաշարների նախարարության
ներկայացուցիչներ Ռուզաննա Փիլոյանի,

/վկայական թիվ 652/
Գևորգ Ալոյանի
/անձն. AB 0386663, տրված 20.12.1996թ., 012-ի կողմից/

դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի »Սիփան-1« սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, երրորդ անձ »Սագամար« փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 01.10.2010 թվականի թիվ 147-Ա հրամանը անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

Գործի դատավարական նախապատմությունը.

»Սիփան-1« սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հայցադիմումով է ներկայացրել ընդդեմ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 01.10.2010 թվականի թիվ 147-Ա հրամանը անվավեր ճանաչելու պահանջի մասին։ Միաժամանակ հայցվորը միջնորդել է ձեռնարկել հայցի ապահովման միջոցներ։
Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 14.10.2010 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ։ Նույն օրը մեկ այլ որոշմամբ մերժվել է հայցի ապահովման միջոց ձեռնարկելու վերաբերյալ միջնորդությունը։
Հայցվորի կողմից 19.10.2010 թվականին կրկին ներկայացվել է միջնորդություն՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին, որը դատարանի 20.10.2010 թվականի որոշմամբ մերժվել է։
Նշված որոշման դեմ հայցվորի կողմից բերվել է բողոք, որը դատարանի (նախագահող դատավոր՝ Ֆ. Մկոյան, դատավոր՝ Ա. Միրզոյան, դատավոր՝ Հ. Բեդևյան) 03.11.2010 թվականի որոշմամբ մերժվել է։
Վերոնշյալ որոշման դեմ հայցվորի կողմից բերվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի 24.11.2010 թվականի որոշմամբ վերադարձվել է։
Հայցվորի կողմից 14.12.2010 թվականին կրկին ներկայացվել է հայցի ապահովման միջոց ձեռնարկելու վերաբերյալ միջնորդություն։ ՀՀ վարչական դատարանի 15.12.2010 թվականի որոշմամբ նշված միջնորդությունը մերժվել է։
ՀՀ վարչական դատարանի 23.12.2010 թվականի որոշմամբ »Սագամար« փակ բաժնետիրական ընկերությունը սույն վարչական գործով ներգրավվել է որպես երրորդ անձ։
Հրավիրվել են նախնական դատական նիստեր, դատարանի 09.11.2010 թվականի որոշմամբ գործը դատաքննության է նշանակվել։

Հայցվորի փաստարկները, հիմնավորումները և պահանջը.

Դիմելով դատարան, հայցվորը հայտնել է, որ հայցվոր ընկերությունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով ստեղծված առևտրային կազմակերպություն և օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն։
30.06.2004 թվականին, »Ընդերքն օգտակար հանածոների շահագործման

նպատակով ուսումնասիրության համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին« ՀՀ օրենքի ուժով հայցվոր »Սիփան-1« ՍՊԸ-ին է տրամադրվել ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի թիվ ՀԱ-Լ-14/252 հանքարդյունահանման հատուկ լիցենզիան։
ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարը 01.10.2010 թվականին արձակել է հրաման, որով վերոհիշյալ լիցենզիան ճանաչվել է ուժը կորցրած։ Որպես ընդունված վարչական ակտի իրավական հիմք, մատնացույց է արվել հայցվորի կողմից »Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին« ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով սահմանված պահանջների ենթադրաբար խախտում թույլ տված լինելու հանգամանքը։ Այլ կերպ ասած պատասխանողը իր կողմից արձակած հրամանը հիմնավորել է հայցվոր ընկերության կողմից օրենքով սահմանված կարգով և ժամկետներում լրցենզային պայմանագիր չկնքելու հանգամանքով։
Հայցվոր ընկերությունը Վիճարկվող վարչական ակտը գտնում է ամբողջովին անհիմն և ապօրինի, հետևյալ հիմնավորմամբ.
Հայցվոր ընկերությանը հանքարդյունահանման հատուկ լիցենզիան տրվել էր 30.06.2004 թվականին։ 02.07.2004 թվականին ՀՀ ԲՆ ՕՀՊԳ-ի կողմից հաստատվել են Լիչքվազ-Թեյի հանքավայրի պաշարները։ Սակայն հաշվի առնելով, որ մետաղների գները միջազգային շուկայում կտրուկ աճել են, անհրաժեշտություն է առաջացել որոշ հանքավայրերի կոնդիցիաների և պաշարների վերանայման, որի արդյունքում ակնկալվում էր պաշարների մինչև 15-20% հավելաճ։ Որպես նշված անհրաժեշտությունն իրականացնելու հիմք է ծառայել ՀՀ կառավարության 09.02.1998 թվականի թիվ 80 որոշման 32-րդ կետը, ըստ որի շահագործվող հանքավայրերում (տեղամասերում) հանքային հումքի կոնդիցիաները և պաշարները ենթակա են վերահաստատման ոչ ուշ, քան 10 տարին մեկ անգամ։ Նույն կետի ''ե'' ենթակետի համաձայն կոնդիցիաների պարամետրերը և պինդ օգտակար հանածոների պաշարները ենթակա են վերահաստատման, եթե փոփոխվել են հանքավայրի բնական պայմանների մասին պատկերացումները, սոցիալ-տնտեսական իրադրությունը, շուկայի պահանջարկը, հանքային հումքի արդյունահանման ու վերամշակման տեխնոլոգիաները և այլ օբյեկտիվ պայմաններ հանգեցնելով շահույթի 20 և ավելի տոկոսով աճի (նվազման)։ Համապատասխան պայմանների առկայության պատճառով նման հանքավայրերի շարքում նշվել է նաև Լիճքվազ-Թեյի հանքավայրը, որի կոնդիցիաների պարամետրերի հաստատման պարտավորությունը դրված է եղել հայցվոր ընկերության վրա։
16.05.2006 թվականին ՀՀ բնապահպանության նախարարության ընդերքօգտագործման հարցերով խորհրդի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետով որոշվել է »Երաշխավորել »Հանրապետական երկրաբանական ֆոնդ« ՊՈԱԿ-ին գրանցելու ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկի-բազմամետաղային հանքավայրի վերին հորիզոնի, մակաբացման ապարների լրահետախուզման աշխատանքները։ 19.05.2006 թվականին՝ հայցվոր ընկերության կողմից ներկայացված Լիճքվազ-Թեյի ոսկի- բազմամետաղային հանքավայրի վերին հորիզոնի, մակաբացման ապարների երկրաբանական ուսումնասիրության իրականացնելու համար նախագծի հիման վրա »Հանրապետական երկրաբանական ֆոնդ« ՊՈԱԿ-ի գրանցամատյանի թիվ 302 համարի տակ վերոհիշյալ աշխատանքները գրանցվել են հայցվոր »Սիփան-1« ՍՊԸ-ի անունով, իսկ աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 2006 թվականի 3-րդ եռամսյակից մինչև 2008 թվականի 4-րդ եռամսյակը։
Դեռ 13.03.2009 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարը

22-Ա հրամանով նույն՝ օրենքով սահմանված ժամկետում լիցենզային պայմանագիր կնքելու հիմնավորմամբ, չեղյալ է ճանաչել հայցվոր ընկերության նույն լիցենզիան։ Ավելի քան մեկ տարի տևած դատավարությունների արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանի 30.07.2010 թվականի թիվ ՎԴ/2894/05/09 վարչական գործով կայացված որոշմամբ անվավեր է ճանաչվել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 13.03.2009 թվականի թիվ 22-Ա հրամանը։
»Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին« ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 10-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ լիցենզառուի և լիազոր մարմնի միջև կնքվում է լիցենզային պայմանագիր։ Լիցենզային պայմանագիրը, ինչպես նաև սահմանված կարգով փորձաքննություն անցած և հաստատված նախագիծը հանդիսանում են տվյալ հանրային իրավունքը հավաստող լիցենզիայի անբաժանելի մասը։ Լիցենզիայի գործողության ժամկետի սկիզբ է համարվում լիցենզիայի պայմանագրի կնքման պահը։ Նույն հոդվածի 3-րդ ենթակետի համաձայն՝ լիցենզիայի տրման և լիցենզային պայմանագրի կնքման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող գերազանցել՝ 9 ամիսը, բացառությամբ սույն հոդվածի վեցերորդ մասի 5-րդ կետով սահմանված դեպքի։
Իսկ Օրենքի 10-բդ հոդվածի 6-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ լիցենցիայի տրման և լիցենզային պայմանագրի կնքման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող գերազանցել օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջվող պաշարների վերահաստատման անհրաժեշտության դեպքում պաշարների վերահաստատումից հետո՝ 9 ամիսը։
ՀՀ վճռաբեկ դատարանի վերը հիշատակված որոշմամբ հաստատված է համարվել նախ այն հանգամանքը, որ հանքարդյունահանման հատուկ լիցենզիա տրամադրելուց հետո պետական լիազոր մարմինն օրենքով իրեն վերապահված շրջանակներում հանձնարարել է հայցվոր ընկերությանն իրականացնել Լիճքվազ-Թեյի ոսկու բազմամետաղային հանքավայրի պաշարների կոնդիցիաների և պաշարների գնահատում, ինչը նշանակել է, որ հանքավայրը գտնվել է պաշարների լրահետախուզման և վերագնահատման փուլում։ Նշվածից ելնելով էլ հաստատված է համարվել, որ համապատասխան աշխատանքները հանձնարարված են եղել հայցվոր ընկերությանը հանքավայրի պաշարների վերահաստատման անհրաժեշտության չափ որոշիչներից ելնելով։ Իսկ համապատասխան աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանվել է 2008 թվականի 4-րդ եռամսյակը։ Այսինքն մինչև հայցվոր ընկերության կողմից կատարվող աշխատանքների ավարտը չէր կարող խոսք գնալ պաշարների վերահաստատման և, որպես հետևանք, հայցվորի հետ լիցենզային պայմանագիր կնքելու մասին։ Մինչդեռ դեռ 13.03.2009 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից նույն՝ Օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի հիմնավորմամբ հայցվոր ընկերության լիցենզիան ճանաչվել է ուժը կորցրած։
Ուստի եթե անգամ Լիճքվազ-Թեյի ոսկու-բազմամետազային հանքավայրի պաշարները վերահաստատված լինեին անհապաղ՝ հայցվոր ընկերությանը հանձնարարված աշխատանքների ավարտից հետո, ապա լիցենզային պայմանագիր կնքելու համար հայցվորը ժամանակ ուներ առնվազն մինչև 01.09.2009 թվականը։
Այսպիսով ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից խախտված իր իրավունքը վերականգնելու համար հայցվորից պահանջվել է ավելի քան 1 տարի ժամանակ։
ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ 13.03.2009 թվականի հրամանը ճանաչվել է անվավեր և նշված որոշման հիմքում դրված է եղել հենց այն հանգամանքը, որ Նախարարությունը չի ունեցել բավարար հիմքեր »Սիփան-1« ՍՊԸ-ի նկատմամբ

նման վարչական ակտ կայացնելու համար, կամ այլ կերպ ասած՝ հրամանն ապօրինի է։
01.10.2010 թվականի որոշման հիմքում պատասխանողը նշել է հայցվոր ընկերության կողմից լիցենզային պայմանագիր կնքած չլինելու հանգամանքը, որը նախատեսված է Օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ ենթակետի վրա։ ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված որոշման համաձայն հաստատված հանգամանք է համարվել, որ հանքավայրը գտնվում է լրահետախուզման և վերագնահատման փուլում։
ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով ամրագրված է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց՝ միայն այնպիսի գործողություններ կատարելու պարտավորությունը, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով։ Այս սահմանադրական պահանջը միաժամանակ հանդիսանում է լիազորության բացակայության դեպքում որևէ իշխանական (վարչական) գործողություն կատարելու արգելք։
»Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին« ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ''ա'' կետի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով։
Վերոգրյալի հիման վրա հայցվորը դատարանից խնդրել է »Սիփան-1« ՍՊԸ-ի ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի թիվ ՀԱ-Լ-14/252 հանքարդյունահանման հատուկ լիցենզիան չեղյալ ճանաչելու մասին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 01.10.2010 թվականի թիվ 147-Ա հրամանը վերացնել (անվավեր ճանաչել)։

Պատասխանողի ներկայացրած փաստերը և հիմնավորումները.

Պատասխանողը ներկայացրել է հայցադիմումի պատասխան, որով առարկել է հայցապահանջի դեմ և հայտնել հետևյալը.
Հայցվորն անհիմն և ապօրինի է համարում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի »Հանքարդյունահանման հատուկ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին« 01.10.2010թ. թիվ 147-Ա վարչական ակտը՝ վկայակոչելով ՀՀ կառավարության 09.02.1998թ. թիվ 80 որոշման 32-րդ կետը, որը նախատեսում է շահագործվող հանքավայրերում ոչ ուշ քան 10 տարին մեկ անգամ հանքային հումքի կոնդիցիաների և պաշարների վերահաստատման հնարավորություն։ Հայցվորն անուշադրության է մատնում, որ Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի նկատմամբ ընկերությունը շահագործման իրավունք ձեռք չի բերել, որն իրավունք կընձեռեր ընկերությանը պաշարները վերահաստատել վերը նշված որոշմանը համաձայն։ Հայցվորը հայցի պահանջը կառուցում է՝ հիմնվելով Լիճքվազ-Թեյի ոսկի բազմամետաղային հանքավայրի հանքային հումքի կոնդիցիայի և պաշարների գնահատմամբ պայմանավորված լրահետախուզման աշխատանքների իրականացման վրա՝ անտեսելով, որ լրահետախուզման աշխատաքները, պետք է իրականացվեն հանքային իրավունքի առկայության դեպքում։
Հայցվորը նույնացնում է շահագործման լիցենզային պայմանագիրը ուսումնասիրության լիցենզային պայմանագրի հետ և օգտագործում է »լիցենզային պայմանագիր« ընդհանրական տերմինը, այնինչ դրանք ըստ էության տարբեր պայմանագրեր են և հանքավայրի օգտագործման տարբեր մոտեցումներ են պահանջում։
Հայցի պահանջը հիմնված է »պատմական« ակնարկների վրա, բացակայում է

պահանջը հիմնավորող օրենքների վրա համապատասխան հղումները, բացառությամբ »Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու /կոնցեսիայի/ մասին« ՀՀ օրենքի /այսուհետ՝ »Կոնցեսիայի մասին« ՀՀ օրենք / 10-րդ հոդվածի 6-րդ կետի մասնակի մեջբերման, որն էլ մեկնաբանվում է՝ առանց նրանով պայմանավորված գործընթացների վերաբերյալ »Կոնցեսիայի մասին« ՀՀ օրենքի համապատասխան հոդվածների վկայակոչման: Հայցվորն անտեսում է, որ լիցենզիան թույլտվություն է /»Կոնցեսիայի մասին« ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 6-րդ,9-րդ կետեր/, որն իրավունք է վերապահում տնտեսվարող սուբյեկտին սկսել հանքային իրավունքի ձևավորման գործընթացը: Հայցադիմումում հայցվորը նշում է, որ լիցենզիան ուժի մեջ է մտնում լիցենզային պայմանագրի կնքման պահից, սակայն դրա վրա հիմնված գործընթացների իրականացմամբ պայմանավորված համապատասխան լիցենզային պայմանագրի կնքման անհրաժեշտությունը անտեսում է; Հայցվորը անդրադառնալով շահագործվող հանքավայրերում պաշարների վերահաստատմանը, անտեսում է նաև ՀՀ կառավարության 09.02.1998թ. թիվ 80 որոշման 35-րդ կետի պահանջն այն մասին, որ շահագործվող հանքավայրերում պետք է իրականացվեն լրահետախուզում և շահագործական հետախուզում համապատասխան լիցենզային պայմանագրի հիման վրա:
Ելնելով վերը շարադրվածից պետք է արձանագրել, որ՝ »Կոնցեսիայի մասին« ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում նշված հասկացության, լիցենզիան լոկ թույլտվություն է հանքային իրավունքների ձևավորման գործընթացի կազմակերպման համար, իսկ հարաբերությունները լիազոր մարմնի և տնտեսվարող սուբյեկտի /լիցենզառուի/ միջև կարգավորվում են կողմերի միջև կնքված համապատասխան լիցենզային պայմանագրի հիման վրա: Պայմանագրով են սահմանվում կողմերի իրավունքներն ու պարտականությունները, դրանց կատարման ժամկետները: Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո է նրանում նախատեսված պարտականությունների, իրավունքների կատարումը պարտադիր դառնում կողմերի համար /ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մաս/:
Հետևաբար, լիցենզառուի իրավունքներն ու պարտականությունները ձևավորվում են հանքավայրի նկատմամբ համապատասխան լիցենզային պայմանագրի կնքման պահից, ինչը հայցվորը չունի և չի կնքել Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի նկատմամբ:
Ինչ վերաբերում է հայցվորի կողմից հայցադիմումում հիշատակված՝ Լիճքվազ-Թեյի ոսկի բազմամետաղային հանքավայրին, ապա պետք է նկատի ունենալ, որ 30.06.2004թ. թիվ ՀԱ-Լ-14/252 հանքարդյունահանման հատուկ լիցենզիան վերաբերում է Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրին, որը »Սիփան-1« ՍՊԸ-ին է տրամադրվել ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրում ոսկի արդյունահանելու նպատակով և որն էլ օրենքի ուժով և շրջանակներում ուժը կորցրած է համարվել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 01.10.2010թ. թիվ 147-Ա հրամանով:
Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով, համաձայն որի պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենքով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 15.05.2008թ. թիվ 653-Ն որոշմամբ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը վերապահված՝ Օրենսգրքով, »Կոնցեսիայի մասին« ՀՀ օրենքով լիազոր մարմնի իրավասությունները և ղեկավարվելով նշված օրենքների պահանջներով, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարը 01.10.2010թ. արձակել է »Հանքարդյունահանման հատուկ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին« թիվ 147-Ա հրամանը՝ հաշվի առնելով ներքոհիշյալ հիմնավորումները:

»Սիփան-1« ՍՊԸ-ին 13.04.2000թ. տրամադրվել է ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի թիվ ՀՎ-ՄՇ-13/28 արտոնագիրը, որը 30.06.2004թ. փոխարինվել է թիվ ՀԱ-Լ-14/252 հանքարդյունահանման հատուկ լիցենզիայով։
ՀՀ օգտակար հանածոների պաշարների գործակալության /այսուհետ՝ ՀՀ ՕՀՊԳ/ 02.07.2004թ. թիվ 31 որոշմամբ վերահաստատվել է Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի պաշարները։
Վերջինիս վերահաստատման օրվանից սկսած »Կոնցեսիայի մասին« ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընկերությունը 9 ամսվա ընթացքում մինչև 02.04.2005թ. պետք է կազմեր շահագործման նախագիծ, ենթարկեր այն շրջակա միջավայրի վրա ազդեցության և տեխնիկական անվտանգության պետական փորձաքննությունների և դրական եզրակացությունների առկայության դեպքում կնքեր շահագործման լիցենզային պայմանագիր։ Նշվածը հիմնավորվում է Օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի, 17-րդ հոդվածի 4-րդ կետի, 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ, 5-րդ կետերի, ՀՀ կառավարության 29.12.2005թ. »Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման կարգը հաստատելու մասին« թիվ 2306-Ն որոշման 4-րդ, 7-րդ կետերի պահանջներով։
Այսպես, Օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ »Երկրաբանական հետախուզման աշխատանքները և հանքավայրերի շահագործումը կատարվում են լիազորված մարմնի և ընդերքօգտագործողի միջև կնքված պայմանագրի համաձայն«։
Օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ շահագործվող ու շահագործմանը նախապատրաստվող հանքավայրերի լրահետախուզումը և շահագործական հետախուզությունը դա օգտակար հանածոների լրացուցիչ պաշարների հայտնաբերման, դրանց քանակի, որակի ճշգրտման, ինչպես նաև շահագործման ընթացքում պաշարների շարժի հաշվառման և ռացիոնալ օգտագործման նպատակով կատարվող աշխատանքներն են։
Օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետն ամրագրում է, որ Օրենսգրքի 17-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված աշխատանքներ կատարելու իրավունքն ընդերքօգտագործողն ստանում է լիազորված մարմնի հետ՝ օգտակար հանածոյի հանքավայրի շահագործման նպատակով կնքված պայմանագրի հիման վրա, իսկ 5-րդ կետն ամրագրում է. որ սույն՝ /20-րդ/ հոդվածի երկրորդ մասի 2-4-րդ կետերով նախատեսված՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության /լրահետախուզման/ աշխատանքները պետական գրանցում են ստանում այդ աշխատանքների կատարման՝ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծի և կնքված պայմանագրի հիման վրա։
ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2306-Ն որոշմամբ հաստատված »Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման« կարգի /այսուհետ՝ Կարգի/ 4-րդ կետի համաձայն, հանքավայրի գնահատումն իրականացվում է ինչպես հանքավայրի երկրաբանական ուսումնասիրության, այնպես էլ դրա շահագործման ընթացքում, իսկ Կարգի 7-րդ կետի համաձայն՝ հանքարդյունահանման լիցենզիայի /հատուկ լիցենզիայի/ տրամադրման ու լիցենզային պայմանագրի կնքման միջև ընկած ժամանակահատվածում՝ հանքավայրի վերագնահատման աշխատանքների իրականացումը պահանջում է օրենքով սահմանված ուսումնասիրության լիցենզիայի ձևակերպում։
»Սիփան-1« ՍՊԸ-ն շահագործման լիցենզային պայմանագիր լիազոր մարմնի հետ չի կնքել և չունի Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի օգտակար հանածոների պաշարների վերագնահատման ուսումնասիրության լիցենզիա։ ՀՀ օրենսդրության՝ մասնավորապես »Կոնցեսիայի մասին« ՀՀ օրենքի նշված պահանջները »Սիփան -1« ՍՊԸ-ի կողմից չեն պահպանվել։ Ուստի, օրենքի ուժով »Սիփան-1« ՍՊԸ-ի թիվ ՀԱ-Լ-14/252 հանքարդյունահանման հատուկ լիցենզիան

ուժը կորցրած է համարվել: Նշված լիցենզիայի ուժը կորցրած լինելու մասին 2005 թվականի հուլիս ամսին տեղեկացվել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության ՀՀ կոնցեսիոն գործակալություն հրավիրված ընկերության տնօրեն Մ. Բագրատյանը, իսկ 2008 թվականի նոյեմբեր ամսին նաև՝ տնօրեն Ա. Էիլերսը: Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի նկատմամբ հանքարդյունահանման լիցենզիա չունենալու փաստը ընդունվել է »Սիփան-1« ՍՊԸ-ի կողմից, որը հիմնավորվում է ներկայացված հետևյալ գրություններով.
1. 27.03.2009թ. թիվ ՕԼ-0103 գրությամբ ընկերությունը խնդրել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի պաշարների վերաբերյալ »տալ տեղեկանք հանքարդյունահանման լիցենզիա ստանալու համար«:
2. 03.04.2009թ. ներկայացված գրությամբ »Սիփան-1« ՍՊԸ-ն դիմել է Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի հանքարդյունահանման հատուկ լիցենզիա ստանալու համար: Պատասխան գրությամբ »Սիփան-1« ՍՊԸ-ին հայտնվել է, որ հանքավայրի շահագործման իրավունքը կտրամադրվի ընկերությանը »Ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոներ պարունակող ընդերքի տեղամասերի նկատմամբ հանքային իրավունքի ձևավորման միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի«-ի կողմից՝ աճուրդով:
3. 14.05.2009թ. նույն պահանջով ներկայացված թիվ 15 գրությունը մերժվել է՝ ղեկավարվելով »Կոնցեսիայի մասին« ՀՀ օրենքի նույն՝ 14-րդ հոդվածի 1-ի մասի /աճուրդով/ պահանջի հիմքով:
Նշված գրությունների հիման վրա պետք է եզրակացնել, որ հայցվորը խուսափել է Լիճքվազ Թեյի ոսկու հանքավայրը աճուրդով ձեռք բերելուց և նախընտրել է հանքավայրի նկատմամբ հանքային իրավունք ունենալ վերը նշված վարչական ակտի անվավեր ճանաչման միջոցով:
»Սիփան-1« ՍՊԸ-ն անտեսել է վերը նշված օրենքների պահանջները, դրանց վերաբերյալ այլ մոտեցում և մեկնաբանում տալով ոչ հիմնավոր պահանջ է ներկայացրել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 01.10.2010թ. թիվ 147-Ա հրամանը անվավեր ճանաչելու վերաբերյալ:
Ելնելով վերը շարադրվածից, հիմք ընդունելով Օրենսգրքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը, 17-րդ հոդվածի 4-րդ մասը, 20-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ կետերը, »Կոնցեսիայի մասին« ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասը, ղեկավարվելով »Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին« ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի ''գ'' ենթակետով՝ պատասխանողը դատարանից խնդրել է հայցը մերժել:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.
1) 13.04.2000 թվականին Ընկերությանը տրամադրված ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի թիվ ՀՎ-ՄՇ-13/28 արտոնագիրը 30.06.2004 թվականին փոխարինվել է թիվ ՀԱ-Լ-14/252 հանքարդյունահանման հատուկ լիցենզիայով:
2) ՀՀ շահագործվող մետաղական հանքավայրերի պաշարների վերագնահատման հարցի քննարկման վերաբերյալ, Նախարարության ընդերքօգտագործման հարցերով խորհրդի նիստի 15.05.2006 թվականի թիվ 2 արձանագրության համաձայն՝ խորհուրդը, հաշվի առնելով, որ մետաղների գները միջազգային շուկայում կտրուկ աճել են, անհրաժեշտություն է առաջացել որոշ հանքավայրերի կոնդիցիաների և պաշարների վերանայումը, որի արդյունքում ակնկալվում է պաշարների մինչև 15-20 տոկոս հավելաճ, առաջարկել է վերահաշվարկել

Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի կոնդիցիաների պարամետրերը: Միաժամանակ արձանագրվել է, որ »Սիփան-1« ՍՊԸ-ն 30.06.2004 թվականին ստացել է թիվ ՀԱ-Լ-14/252 հանքարդյունահանման հատուկ լիցենզիան: Հանքավայրի պաշարները հաստատվել են 02.02.2004 թվականին և ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից եղել է արձանագրային հանձնարարական Լիճքվազ-Թեյի ոսկու-բազմամետաղային հանքավայրի վերին հորիզոնի, մակաբացման ապարների երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու համար: Հաշվի առնելով, որ »Սիփան-1« ՍՊԸ-ի կողմից ՀՀ բնապահպանության նախարարությանը ներկայացվել է համապատասխան նախագիծ, առաջարկվել է 29.12.2005 թվականի ՀՀ կառավարության թիվ 2306-Ն որոշման պահանջների համաձայն կատարվելիք աշխատանքներին տալ պետական գրանցում: Խորհրդի նիստում որոշվել է՝ երաշխավորել Հանրապետական երկրաբանական ֆոնդին գրանցելու« ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու-բազմամետաղային հանքավայրի վերին հորիզոնի մակբացման ապարների լրահետախուզական աշխատանքները:
3) »Հանրապետական երկրաբանական ֆոնդ« ՊՈԱԿ-ի ընդերքի երկրաբանական ուսումնասիրության պետական գրանցման մասին 19.05.2006 թվականի թիվ Ֆ-06-38/1 տեղեկանքի համաձայն՝ »Հանրապետական երկրաբանական ֆոնդ« ՊՈԱԿ-ում գրանցվել են ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու-բազմամետաղային հանքավայրի վերին հորիզոնի լրահետախուզման աշխատանքները: Նշված աշխատանքների կատարման համար սահմանվել է ժամկետ, որն ընդգրկել է 2006 թվականի 3-րդ եռամսյակից մինչև 2008 թվականի 4-րդ եռամսյակի ավարտն ընկած ժամանակահատվածը: Նույն տեղեկանքի համաձայն՝ աշխատանքների նախագծային արժեքը կազմել է 116.2 հազար ՀՀ դրամ:
4) Նախարարության 26.12.2006 թվականի թիվ 6-ԱԴ/163 գրության համաձայն՝ »ՀՀ բնապահպանության նախարարությունը, քննարկելով »Սիփան-1« ՍՊ ընկերության կողմից ներկայացված Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի շահագործման նախագիծը գտել է, որ՝
ա. Հանքավայրը համաձայն հանքարդյունահանման հատուկ լիցենզիայի՝ թիվ ՀԱ-Լ-14/252, տրամադրված է »Սիփան-1« ՍՊԸ 25 տարի ժամկետով.
բ. Հանքավայրը ներկա դրությամբ գտնվում է պաշարների լրահետախուզման և վերագնահատման փուլում, որը կբերի պաշարների զգալի աճի, ինչպես արտահաշվեկշռային պաշարների վերագնահատման, այնպես էլ նոր հանքային մարմինների հայտնաբերման հաշվին.
գ. Պաշարների աճը հավանաբար կբերի հանքավայրի բացման և մշակման սխեմայի փոփոխության.
դ. Նախարարություն դիմելու պահի դրությամբ ընկերությունը չի ունեցել հանքավայրի շահագործման համար անհրաժեշտ տարածքներ՝ պոչամբարային տնտեսություն կազմակերպելու համար:
Հաշվի առնելով վերոնշյալը՝ Նախարարությունը նպատակահարմար է գտել հանքավայրի շահագործման նախագծի վերջնական քննարկումները իրականացնել պաշարների լրահետախուզման և վերագնահատման աշխատանքների ավարտից հետո:
5) Նախարարությանը հասցեագրված 15.12.2008 թվականի գրությամբ Ընկերությունը խնդրել է թույլատրել երկու տարով երկարաձգել ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու-բազմամետաղային հանքավայրի վերագնահատման աշխատանքները, որոնց ավարտման ժամկետ էր սահմանված 31.12.2008 թվականը, և աշխատանքները գրանցել »Հանրապետական երկրաբանական ֆոնդ« ՊՈԱԿ-ում:
6) Նախարարության աշխատակազմի ղեկավարի 13.01.2009 թվականի թիվ 05-ԿՂ-03-34 գրության համաձայն՝ »վերագնահատման աշխատանքների ժամկետը

երկարաձգելու վերաբերյալ Ձեր դիմումը քննության առնելու նպատակով լրացուցիչ փաստաթղթեր են պահանջվել համապատասխան գործակալություններից: Գրության վերաբերյալ նախարարության դիրքորոշման մասին լրացուցիչ Ձեզ կտեղեկացվի փաստաթղթերի քննարկման արդյունքում«:
7) ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 01.10.2010 թվականի թիվ 147-Ա հրամանով ուժը կորցրած է ճանաչվել Ընկերության թիվ ՀԱ-Լ-14/252 հանքարդյունահանման հատուկ լիցենզիան: Հրամանի հիմքում դրվել է »Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին« ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասը և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 15-րդ հոդվածի 6-րդ կետը:
8) Սույն գործի նյութերում բացակայում է որևէ ապացույց առ այն, որ Ընկերության և Նախարարության միջև մինչև 2009 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ կնքվել է լիցենզային պայմանագիր:

Վարչական դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները.

Լսելով կողմերի բացատրությունները, հետազոտելով գործում առկա գրավոր ապացույցները, գնահատելով դրանք, դատարանը եզրակացրեց, որ հայցը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախկինում քննված քաղաքացիական կամ վարչական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված փաստերը միևնույն կողմերի մասնակցությամբ սույն օրենսգրքով նախատեսված որևէ գործ քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն:
Վերոգրյալի հիման վրա դատարանն արձանագրում է, որ թիվ ՎԴ/2894/05/09 վարչական գործով՝ ըստ հայցի »Սիփան-1« ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հաստատված փաստերը սույն գործը քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն:
»Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին« ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդերքի ուսումնասիրության աշխատանքներ կամ հանքարդյունահանում կարող է իրականացվել միայն սույն օրենքի համաձայն տրամադրված հանքային իրավունքների կամ սույն օրենքով նախատեսված այլ իրավասության առկայության դեպքում:
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի պահանջներին համապատասխան դիմում ներկայացրած ցանկացած տնտեսավարող սուբյեկտին կարող է, կախված հայցվող լիցենզիայի ժամկետից, տրամադրվել ուսումնասիրության հատուկ լիցենզիա, ուսումնասիրության լիցենզիա, հանքարդյունահանման հատուկ լիցենզիա, հանքարդյունահանման լիցենզիա:
Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ լիցենզառուի և լիազոր մարմնի միջև կնքվում է լիցենզային պայմանագիր: Լիցենզային պայմանագիրը, ինչպես նաև սահմանված կարգով փորձաքննություն անցած և հաստատված նախագիծը հանդիսանում են տվյալ հանքային իրավունքը հավաստող լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի գործողության ժամկետի սկիզբ է համարվում լիցենզային պայմանագրի կնքման պահը: Լիցենզիայի տրման և լիցենզային պայմանագրի կնքման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող գերազանցել՝
... 3) հանքարդյունահանման հատուկ լիցենզիայի համար՝ 9 ամիսը, բացառությամբ

սույն հոդվածի վեցերորդ մասի 5-րդ կետով սահմանված դեպքի, իսկ նույն մասի 5-րդ կետի համաձայն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջվող պաշարների վերահաստատման անհրաժեշտության դեպքում պաշարների վերահաստատումից հետո՝ 9 ամիսը։
ՀՀ կառավարության 09.02.1998 թվականի պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգումը հաստատելու մասին թիվ 80 որոշման 32-րդ կետի »ե« ենթակետի համաձայն՝ շահագործվող հանքավայրերում (տեղամասերում) հանքային հումքի կոնդիցիաները և պաշարները ենթակա են վերահաստատման ոչ ուշ, քան 10 տարին մեկ անգամ։Կոնդիցիաների պարամետրերը և պինդ օգտակար հանածոների պաշարները ենթակա են վերահաստատման, եթե՝ փոփոխվել են հանքավայրի բնական պայմանների մասին պատկերացումները, սոցիալ-տնտեսական իրադրությունը, շուկայի պահանջարկը, հանքային հումքի արդյունահանման ու վերամշակման տեխնոլոգիաները և այլ օբյեկտիվ պայմաններ՝ հանգեցնելով շահույթի 20 և ավելի տոկոսով աճի (նվազման)։
ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2306-Ն որոշմամբ հաստատված »Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման կարգi« 4-րդ կետի համաձայն՝ հանքավայրի գնահատումն իրականացվում է դրա երկրաբանական ուսումնասիրության և շահագործման ընթացքում, իսկ սույն կարգի 7-րդ կետում նշված դեպքերում՝ նաև հանքարդյունահանման լիցենզիայի (հատուկ լիցենզիայի) տրամադրման ու լիցենզային պայմանագրի կնքման միջև ընկած ժամանակահատվածում։
Նույն կարգի 7-րդ կետի համաձայն՝ հանքարդյունահանման լիցենզիայի (հատուկ լիցենզիայի) տրամադրման ու լիցենզային պայմանագրի կնքման միջև ընկած ժամանակահատվածում հանքավայրի վերագնահատումը կատարվում է, եթե փոփոխվել են հանքահումքի որակին ստանդարտներով կամ տեխնիկական կանոնակարգերով ներկայացվող պահանջները և (կամ) բացահայտված է հանքավայրի նախկինում տրված գնահատականի անհամապատասխանությունը երկրի սոցիալ-տնտեսական և շուկայի արդի պայմաններին, գիտության և տեխնիկայի ներկայիս մակարդակներին։
Նշված նորմերի վերլուծության հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ »լիցենզիայի գործողության ժամկետի սկիզբ է համարվում լիցենզային պայմանագրի կնքման պահը, որը հանքարդյունահանման հատուկ լիցենզիայի դեպքում պետք է կնքվի լիցենզիայի տրման պահից 9 ամսվա ընթացքում, բացառությամբ այն դեպքի, երբ անհրաժեշտություն է առաջացել վերահաստատելու պաշարները։ Ընդ որում, այս դեպքում լիցենզային պայմանագիրը կնքվում է պաշարների վերահաստատումից հետո 9-ամսյա ժամկետում« (Տե՛ս թիվ ՎԴ/2894/05/09 վարչական գործով՝ ըստ հայցի »Սիփան-1« ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 30.07.2010 թվականի որոշումը)։
Սույն գործի փաստերի համաձայն՝ 13.04.2000 թվականին Ընկերությանը տրամադրված ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի թիվ ՀՎ-ՄՇ-13/28 արտոնագիրը 30.06.2004 թվականին փոխարինվել է թիվ ՀԱ-Լ-14/252 հանքարդյունահանման հատուկ լիցենզիայով։ Նախարարության ընդերքօգտագործման հարցերով խորհրդի նիստի 15.05.2006 թվականի թիվ 2 արձանագրության համաձայն՝ խորհուրդը, հաշվի առնելով, որ մետաղների գները միջազգային շուկայում կտրուկ աճել են, անհրաժեշտություն է առաջացել որոշ հանքավայրերի կոնդիցիաների և պաշարների վերանայումը, որի արդյունքում ակնկալվում է պաշարների մինչև 15-20 տոկոս հավելաճ, առաջարկել է

վերահաշվարկել Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի կոնդիցիաների պարամետրերը։ Միաժամանակ արձանագրվել է, որ ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու-բազմամետաղային հանքավայրի պաշարները հաստատվել են 02.02.2004 թվականին և ՀՀ ՕՀՊԳ-ի կողմից եղել է արձանագրային հանձնարարական հանքավայրի վերին հորիզոնի, մակաբացման ապարների երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելու համար։
Վերը շարադրված իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից հետևում է, որ հանքարդյունահանման հատուկ լիցենզիա տրամադրելուց հետո պետական լիազոր մարմինը օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում հանձնարարել է Ընկերությանն իրականացնել Լիճքվազ-Թեյի ոսկու-բազմամետաղային հանքավայրի պաշարների կոնդիցիաների և պաշարների վերագնահատում, այսինքն՝ ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու-բազմամետաղային հանքավայրը գտնվել է պաշարների լրահետախուզման և վերագնահատման փուլում։ Այդ փուլը սկսվել է պետական լիազոր մարմնի կողմից լիցենզառու Ընկերությանը պահանջ ներկայացնելով՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված՝ պաշարների վերահաստատման անհրաժեշտության չափորոշիչներից ելնելով։ Ընկերության կողմից կատարման ենթակա աշխատանքների համար սկիզբ է գրանցվել 2006 թվականի 3-րդ եռամսյակը, ավարտը՝ 2008 թվականի 4-րդ եռամսյակը։ Փաստորեն, տվյալ դեպքում լիցենզային պայմանագիրը պետք է կնքվեր նշված աշխատանքներից հետո՝ 9 ամսվա ընթացքում, այսինքն՝ մինչև 2009 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ։ Մինչդեռ, նշված փաստի վերաբերյալ որևէ ապացույց դատարանին չի ներկայացվել։
»Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին« ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազոր մարմինն իրավասու է սույն օրենքի համաձայն՝ հանքային իրավունքների և թույլտվությունների տրամադրումը, ինչպես նաև այդ իրավունքների իրականացման նկատմամբ վերահսկողությունը։ Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ ընդերքօգտագործման իրավունքը վաղաժամկետ դադարեցվում է, իսկ պայմանագիրը լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև սույն օրենսգրքով սահմանված հետևյալ հիմքերով, եթե՝ ընդերքօգտագործման ընթացքում չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները։
Տվյալ դեպքում Ընկերության կողմից ընդերքօգտագործման ընթացքում չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները, որի հիման վրա իրավասու լիազոր մարմինը՝ Նախարարությունը, դադարեցրել է Ընկերության ընդերքօգտագործման իրավունքը։
»Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին« ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝
ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.
բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում։
Ամբողջ վերոշարադրյալի հիման վրա դատարանն արձանագրում է, որ բացակայում է վիճարկվող հրամանն անվավեր ճանաչելու որևէ հիմք, հետևաբար հայցն անհիմն է և մերժման ենթակա։

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ, 112-115-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-132-րդ հոդվածներով, դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

»Սիփան-1« սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, երրորդ անձ »Սագամար« փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 01.10.2010 թվականի թիվ 147-Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել։
Պետական տուրքի հարցը համարել լուծված։
Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանին։
Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին։

ԴԱՏԱՎՈՐ ԿԱՐԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ